ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

«ՏԿԵՆ-ԷԱՃԾՁԲ-26/15» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի* գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ

մեկնարկ՝ 08.01.2026թ.
ժամը 12:30
ավարտ՝ 04.02.2026թ.
ժամը 10:00

Գնահատող հանձնաժողովի կազմը՝

Հանձնաժողովի նախագահ՝

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ներդրումային ծրագրերի համակարգման, տնտեսագիտական վերլուծության և մոնիթորինգի վարչության պետ (հանձնաժողովի նախագահ՝ ԳՊ/ԳԱՊ)	Արմեն Մանուկյան

Հանձնաժողովի անդամներ՝

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ներդրումային ծրագրերի համակարգման, տնտեսագիտական վերլուծության և մոնիթորինգի վարչության տնտեսագիտական վերլուծության բաժնի պետ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)	Վահան Հայրապետյան
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության օրենսդրության բաժնի գլխավոր իրավաբան (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)	Աննա Ավագյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գնումների համակարգման և կազմատնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի պետ (հանձնաժողովի քարտուղար՝ ԳՊ/ՄՀՄ)	Զանուշ Հայրապետյան

«ՏԿԵՆ-ԷԱՃԾՁԲ-26/15» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) հայտերի գնահատման նիստի օրակարգը

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայությունների վերաբերյալ:
2. Տեղեկություն՝ Ընթացակարգի հայտերի ներկայացման, հակադարձ աճուրդի օրվա և ժամի մասին:
3. Տեղեկատվություն Armeps (eauction.armeps.am) էլեկտրոնային համակարգում հայտեր ներկայացրած մասնակիցների վերաբերյալ:
4. Տվյալներ՝ Ընթացակարգին էլեկտրոնային հայտեր ներկայացրած յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին:
5. Տվյալներ՝ հակադարձ աճուրդում հաղթող ճանաչված մասնակցի հայտում Ընթացակարգի հրավերով (այսուհետ՝ Հրավեր) պահանջվող փաստաթղթերի առկայության և ներկայացրած փաստաթղթերի՝ Հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին:
6. Տեղեկատվություն՝ հակադարձ աճուրդում հաղթող ճանաչված մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու մասին:
7. Տեղեկատվություն՝ Հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումների, հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:
8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտի գնահատման արդյունքների հաստատման (մրցույթի արդյունքների ամփոփման) մասին:

* Սույն գնումն իրականացվում է համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 3-րդ մասի: Գնման առարկան ներառված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված ցուցակում:

1. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայությունների վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գնման գինը.

Չափաբաժնի		Չափաբաժնի անվանումը
համարը	գնման գինը	
1	25 000 000	ներքին աուդիտի ծառայություններ

2. Տեղեկություն՝ Ընթացակարգի հայտերի ներկայացման, հակադարձ աճուրդի օրվա և ժամի մասին

2.1 Ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետ էր սահմանվել 2026 թվականի հունվարի 7-ը՝ ժամը 12^{00}-ն:

2.2 Հակադարձ աճուրդը մեկնարկել է 2026 թվականի հունվարի 8-ին ժամը 12^{00}-ին:

3. Տեղեկատվություն Armeps (eauction.armeps.am) էլեկտրոնային համակարգում հայտ ներկայացրած մասնակիցների վերաբերյալ

3.1 Սահմանված կարգով ներկայացված հայտերը, որոնք ընդունվել են eauction.armeps.am էլեկտրոնային համակարգի կողմից և համարվել հետագա գնահատման համար ընդունելի 2-ն են:

3.2 Ընթացակարգի շրջանակներում հայտեր ներկայացրած մասնակիցների տվյալները՝ անվանումը, գտնվելու կամ բնակության վայրը, կապի միջոցները.

№	Մասնակցի անվանումը	Գործունեության հասցեն	ՀՎՀՀ	Մասնակիցների էլեկտրոնային փոստի հասցե, հեռախոս
1	«Էն Աուդիտ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Նորք-Մարաշ թաղամաս Աբովյան փ. 27	01504398	enaudit123@mail.ru Հեռ. +374 91 408 041
2	«ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ	ք. Երևան, Նորագավիթ 13 փողոց, տուն 21/1,	00131856	auditglobaudit@mail.ru Հեռ. +374 27 22 23

4. Տվյալներ՝ Ընթացակարգին էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակցի առաջարկած գնի մասին

Չափաբաժնի համարը	Գնման առարկայի անվանումը	Գնման գին	Մասնակցի անվանումը	Նախնական առաջարկ			Վերջնական առաջարկ		
				գինը առանց ԱԱՀ	ԱԱՀ	ընդհանուր գինը	գինը առանց ԱԱՀ	ԱԱՀ	ընդհանուր գինը
1	Ներքին աուդիտի ծառայություններ	25 000 000	**«Էն Աուդիտ» ՍՊԸ**	**20 833 333**	**20%**	**24 999 999.6**	**19 891 600**	**20%**	**23 869 920**
			«ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ	37 500 000	20%	45 000 000	20 100 000	20%	24 120 000

5. Տվյալներ՝ հակադարձ աճուրդում հաղթող ճանաչված մասնակցի հայտում Հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և ներկայացրած փաստաթղթերի՝ Հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին

5.1 Ընթացակարգի 1-ին չափաբաժնի հակադարձ աճուրդի արդյունքում հաղթող մասնակից է ճանաչվել՝ «Էն Աուդիտ» ՍՊԸ-ն:

5.2 Հակադարձ աճուրդի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի էլեկտրոնային հայտում առկա է անհամապատասխանություն Ընթացակարգի հրավերով սահմանված պայմանների (պահանջների) նկատմամբ՝ Հրավերի Հավելված 1-ով և Հավելված 1.1-ով ներկայացված իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը չի համապատասխանում իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցած՝ մասնակցի 2026թ. իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջում առկա տեղեկատվությանը:

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

1) Գնահատող հանձնաժողովը որոշեց ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով և հիմք ընդունելով արձանագրված անհամապատասխանությունները՝ Ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստը 02.02.2026թ. մեկ աշխատանքային օրով կասեցնել և առաջարկել «Էն Աուդիտ» ՍՊԸ-ին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

2) Գնահատող հանձնաժողովի նիստը վերսկսել ս.թ. փետրվարի 4-ին՝ ժամը 9:30-ին:

Որոշումն ընդունվել է՝ կողմ- 3, դեմ-0

6. Տեղեկատվություն՝ հակադարձ աճուրդում հաղթող ճանաչված մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու մասին

6.1 Ընդունել ի գիտություն, որ «Էն Աուդիտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրված անհամապատասխանությունները շտկվել են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում:

6.2 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով գնահատման արդյուքները հանձնաժողովը որոշեց «Էն Աուդիտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:

7. Տեղեկատվություն՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումների, հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

7.1 «Գնումների մասին» օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ Հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:

7.2 Սույն ընթացակարգի վերաբերյալ հիմնավորումներ չեն տրվել:

8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտի գնահատման արդյունքների հաստատման (մրցույթի արդյունքների ամփոփման) մասին:

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

8.1 Ընթացակարգի 1-ին չափաբաժնի ընտրված մասնակից ճանաչել «Էն Աուդիտ» ՍՊԸ-ին:

8.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը՝ անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր:

8.3 Ընթացակարգի ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ՝ հաշվի առնելով «Գնումների մասին» օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:

8.4 Պայմանագիր չկնքվելու դեպքում Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրն ու ժամը սահմանել այդ իրադարձության հայտնի լինելու օրվան հաջորդող աշխատանքային օրը՝ ժամը 12:00-ն:

Որոշումն ընդունվել է՝ կողմ- 3, դեմ-0

Հանձնաժողովի անդամների ստորագրությունները՝

Հանձնաժողովի նախագահ՝	**Արմեն Մանուկյան**	.....
Հանձնաժողովի անդամներ՝	**Վահան Հայրապետյան**	.....
	Աննա Ավագյան	.....
Քարտուղար՝	**Զանուշ Հայրապետյան**	.....